

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Երկկողմ համագործակցության զարգացում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին:

Հանդիպման սկզբին նախարարը շնորհավորել է դեսպանին մեր երկրում դիվանագիտական առաքելությունն սկսելու կապակցությամբ և մաղթել նրան բեղմնավոր աշխատանք: «Վերջին տարիներին Իրանի Իրանի հետ հատկապես գյուղատնտեսության բնագավառում ձևավորվել են փոխշահավետ հարաբերություններ: Հուսով եմ, Ձեր պաշտոնավարման ընթացքում երկուստեք համագործակցությունը ազդարարյին ոլորտում ավելի կամրապնդվի ու կընդլայնվի», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Ընդգծելով, որ գյուղատնտեսության բնագավառում Հայաստանի և Իրանի միջև դեռևս առկա է չօգտագործված ներուժ՝ փոխգործակցության հեռանկարային ճյուղերի թվում, նախարարը մատնանշել է անասնապահությունը՝ հատկապես ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը, համատեղ շերմոցային տնտեսությունների հիմնման հնարավորությունը, ինչպես նաև կարևորել է ոռոգման ոլորտում կաթիլային համակարգի ներդրման և հակակարկտային ցանցերի արտադրության ոլորտում երկկողմ համագործակցության զարգացումը: Իրանի դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին, իր հերթին, նշել է, որ Իրանը կարող է արդյունավետ համագործակցել Հայաստանի հետ նաև սերմարտադրության և ծաղկի արտադրության, ինչպես նաև նոր պտղատեսակների բարելավման ոլորտներում:

Կողմերը քննարկել են նաև Հայաստանում ծովախեցգետնի արտադրությունը հիմնելու հնարավորությունը՝ Եվրասիական տնտեսական միություն արտահանելու հեռանկարով, որտեղ այս մթերքն ունի մեծ պահանջարկ: Հանդիպման ընթացքում նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է նաև Հայաստանում և Իրանում կազմակերպել գյուղատնտեսական ոլորտի բիզնես-համաժողովներ, որոնք հնարավորություն կընձեռեն հայ և իրանցի գործարարներին ծանոթանալ երկու երկրներում արտադրվող պարենային արտադրանքին և լրացուցիչ խթան կհանդիսանան երկկողմ կապերի աշխուժացման համար:

Հանդիպման ավարտին ՀՀ գյուղատնտեսության նախարարը խնդրել է դեսպանին՝ իր իրանցի գործընկերոջը փոխանցել Հայաստան այցելելու հրավերը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Մորթն իրականացվում է «հալալ» կանոնների համաձայն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Աիլ ալ-Բեյթի Համաշխարհային Համագումարի գլխավոր քարտուղար Այաթուլլա Մոհամմադ Հասան Ախթարիի հետ, Արարատի մարզի Մասիս քաղաքում այցելել է 2015 թվականի օգոստոս ամսին շահագործման հանձնված «Ոսկե կացին» ՍՊԸ-ի սպանդանոց, որտեղ մորթն իրականացվում է «հալալ» կանոնների համաձայն:

Ներկա էին նաև ՀՀ-ում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին, այլ պաշտոնատար անձինք: «Հայաստանը Իրանի հետ կարող է համագործակցել գյուղատնտեսության բնագավառի մի շարք ճյուղերում: Մասնավորապես, երկկողմ փոխգործակցության համար առավել հեռանկարային են այն ոլորտները, որոնցում Իրանն ունի բավականին մեծ առաջընթաց, դրանք են՝ սերմաբուծությունը, պտղաբուծությունը, կաթիլային ոռոգումը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը համագործակցության հնարավոր ուղղություններից է համարել նաև հայ-իրանական համատեղ ձեռնարկությունների հիմնումը, հատկապես անասնապահության ոլորտում՝ պատրաստի մամթերքը հետագայում դեպի Իրան արտահանելու նպատակով: Այս առումով, նախարարը տեղեկացրել է, որ նկատի ունենալով Իրանում Հայաստանից ներկրվող ոչխարի մսի պահանջարկը, հայկական կողմը կարող է տարեկան 250-300 հազար գլուխ ոչխար արտահանել Իրան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Քննարկել են մարզի հիմնախնդիրները

Նախագահ Սերժ Սարգսյանը Արմավիրի մարզպետի և մարզպետարանի պատասխանատուների մասնակցությամբ, խորհրդակցություն է անցկացրել Արմավիրի մարզի 2014թ. և 2015թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առկա հիմնախնդիրների, գերակայությունների և զարգացման ծրագրերի քննարկման նպատակով:

«Արմավիրի մարզը հանրապետության գյուղատնտեսության ամենակարևոր շտեմարաններից մեկն է և ունի մի քանի առանձնահատկություն: Դրանցից մեկը՝ այստեղ գյուղատնտեսական համախառն արտադրանքը երեք անգամ գերազանցում է արդյունաբերական համախառն արտադրանքին, չնայած մարզում է գտնվում արդյունաբերական հսկաներից մեկը՝ Հայկական ատոմակայանը: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ չնայած մեծածավալ արտադրանքին, չնայած ոռոգելի ու բերրի հողակտորների առկայությանը, մարզում գյուղատնտեսությունը մշտապես կախված բնակիչմայական պայմաններից, այսինքն՝ վաղ գարնանային ցրտահարություններ, անձրևների պակաս, կարկուտ և այլն: Մարզում գյուղատնտեսության զարգացման վրա ուշադրությունը ավելացնելով, մենք պետք է գնանք պաշտպանված և ինտենսիվ գյուղատնտեսության ճանապարհով: Պետք է խրախուսենք գյուղացիական տնտեսություններին, խոշոր ֆերմերներին, որպեսզի նրանք սկսեն օգտագործել ցանցեր, այլ երկրների օրինակով, որը բերքի պաշտպանության ամենահուսալի միջոցն է: Պետք է ընտրենք կաթիլային ոռոգման ճանապարհը, որովհետև վերջին տարիների ընթացքում, մենք շատ միջոցներ ենք ուղղել ոռոգման համակարգի կատարելագործմանը, նոր աղբյուրների հայտնաբերմանը, այդուհանդերձ, եթե ամբողջովին օգտագործենք գյուղատնտեսական նշանակության հողերը, մշտապես ունենալու ենք ջրի պակաս, իսկ այդքան ջուրն անարդյունավետ օգտագործելն ու վատնելն անիմաստ է: Պետք է հասկանալ, թե ի՞նչ խթանող միջոցներ կարող ենք ձեռնարկել, որպեսզի մարդիկ մեծ ցանկություն և շահագրգռվածություն ունենան այս ճանապարհով գնալու:

Բոլոր այգիները պետք է ցանցապատել, պետք է դնել կաթիլային ոռոգման տակ, բայց անհրաժեշտ է գիտակցել նաև, որ դրանք մեծ ծախսեր են և առավել ևս՝ անհատ գյուղացիների համար այդ աշխատանքը մեծ ռիսկոսություն կներկայացնի:

Գործադիրը հավանություն է տվել «Վեդու ջրամբարի ֆինանսավորման նպատակով, «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չարգացման ֆրանսիական գործակալության միջև 75 մլն եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի նախագծին»:

Համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Արարատյան դաշտավայրում մեղմելու սակավաջրությունը, ինչպես նաև՝ մեխանիկական ոռոգումից անցում կատարել ինքնահոս համակարգի, ինչն, իր հերթին, կհանգեցնի էլեկտրաէներգիայի խնայմանը: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ կառավարությունը ջրամբարաշինությունը հայտարարել է՝ որպես գերակա ուղղություն, հանձնարարելով բոլոր պատկան մարմիններին՝ արագ կազմակերպել համապատասխան գործընթացները, որպեսզի հունվար-փետրվար ամիսներին շինարարական աշխատանքները սկսվեն:

Ընթացիկ արդյունքների ամփոփում Էջ 3

Սուլակուն կլուծվի արտոների ջրարբիացման խնդիրը Էջ 5

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Մորթն իրականացվում է «հայալ» կանոնների համաձայն

Միաժամանակ նախարարը հավաստիացրել է, որ կառավարությունը պատրաստ է աջակցել հարևան երկրի ներկայացուցիչներին՝ Հայաստանում ներդրումներ իրականացնելու գործում:

Այաթուլլա Մոհամմադ Հասան Ախթարին իր հերթին բարձր է գնահատել հայ-իրանական հարաբերությունները քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Նա նաև հավելել է, որ շնորհիվ բարձր որակական հատկանիշների՝ Իրանում մեծ է հատկապես հայկական անասապահական և թռչնաբուծական ատաղորանքի, կաթնամթերքի և մսամթերքի պահանջարկը:

Սպանդանոցում նախարարի շրջալսի ընթացքում գլխավոր տնօրեն Անուշ Անուշյանը տեղեկացրել է, որ գործունեության սկզբում այստեղ 1 հերթափոխի ընթացքում մորթի էին ենթարկվում 700 գլուխ կենդանիներ, ներկայումս այդ թիվը աճացել է 1000 գլխի, և նախատեսվում է հետագայում 1 հերթափոխում իրականացնել 1500 գլուխ կենդանու մորթ: Մինչև հաջորդ տարվա մայիս ամիսը նախատեսվում է կազմակերպել նաև խոշոր եղջերավոր կենդանիների մորթ: Այժմ շինարարական աշխատանքներ են կատարվում խոշոր եղջերավոր կենդանիների մորթի հոսքագիծ կառուցելու նպատակով:

ՀԱՆԳԻՊՈՒՄ **Կենտրոնի գործունեության մարտահրավերները**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսի հետ, այցելել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն, որի հիմնադրման 15-ամյակը կլրանա օրերս: Նրանց ուղեկցում էին նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանն ու կենտրոնի տնօրեն Վարդան Ուռուտյանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը ստեղծվել է 2000 թվականին՝ ՀԱԱՀ-ի, Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի և ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեթոդականության մասնաճյուղի միջև: Կենտրոնն առաջարկում է ագրոբիզնեսի ոլորտի կրթությունը Հայաստանի ագրարային համալսարանում և հարակից հատվածներում, պատրաստում է տնտեսագիտական, շուկայագիտական և կառավարման մասնագետներ: Այստեղ ուսուցումն իրականացվում է ԱՄՆ-ի և եվրոպական առաջատար համալսարաններում գիտական աստիճաններ ստացած հայ և ամերիկացի դասախոսների կողմից:

Նախարարը շնքել է կենտրոնում, զրուցել պրոֆեսոր-դասախոսական կազմի և ուսանողների հետ: Սերգո Կարապետյանը բարձր է գնահատել կենտրոնի աշխատանքն ու այստեղ պատրաստվող մասնագետների գիտելիքներն ու մասնագիտական հմտությունները: «Րուբ մեր ապագան եք, և ես վստահ եմ, որ վաղը ձեզանից շատերը նաև պետական կառավարման համակարգի տարբեր օղակներում բարձր պաշտոններ են զբաղեցնելու: Մենք այսուհետ նույնպես աջակցելու ենք, որպեսզի այս կենտրոնի կողմից պատրաստված մասնագիտական կադրերը հենց մեր երկրում աշխատանք գտնեն, և չտեղափոխվեն արտերկիր»,- նշել է նախարար Կարապետյանը: ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը, իր հերթին, կարևորել է կենտրոնի գործունեությունը՝ նշելով, որ իր այցելությունների ժամանակ մշտապես տպավորված է եղել ուսուցման որակով, պրոֆեսորադասախոսական կազմի հմտություններով՝ վստահություն հայտնելով, որ այն գիտելիքները, որոնք փոխանցվում են ուսանողներին, կօգնեն նրանց պատրաստ լինել դիմագրավելու ոլորտի մարտահրավերներին:

Դեսպանը հավելել է, որ Միացյալ Նահանգների կառավարությունը հպարտ է գործակցելու այս հաստատության հետ, և իրենք օգնել են, որ այն դառնա ճանաչված ուսումնական կենտրոն գյուղատնտեսության ոլորտում, որի արդյունքում՝ այժմ կենտրոնը հրապուրիչ է ոչ միայն հայ ուսանողների, այլև՝ այլ երկրների երիտասարդների համար: Հանդիպման ընթացքում հյուրերը պատասխանել են նաև ուսանողներին հետաքրքրող հարցերին: Նախարարն իր խոսքում կարևորել է գյուղատնտեսական կրթությանը և կրթությանը մեծ նշանակություն տրվելը, ապահովագրական համակարգի ներդրումը, գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի նվազեցումը, կլիմայի փոփոխության պայմաններում ձեռնարկվելիք միջոցառումները և այլ խնդիրներ:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավելացնել դեպի Ռ-Դ արտահանման ծավալները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը խորհրդակցություն է ունեցել հանրապետությունից թարմ պտուղ-բանջարեղեն արտահանող շուրջ 20 ընկերությունների ներկայացուցիչների և անհատ ձեռներեցիների հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաև ՀՀ ՉՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի տեղակալ Գոլդանես Հայրապետյանը:

Հանդիպման նպատակն էր՝ քննար-

կել Ռ-Դ կողմից թուրքական ապրանքների նկատմամբ կիրառվող արգելանքի պարագայում, հայկական արտադրանքի արտահանումն ավելացնելու հնարավորությունները: «Այսօր պաշտոնապես հրապարակվել է այն գյուղատնտեսական մթերքների ցանկը, որը Ռուսաստանի Դաշնությունն արգելել է ներկրել Թուրքիայից: Սրանով նոր հնարավորություններ են ստեղծվում տեղական արտադրողների համար ավելացնելու դեպի ռուսաստանյան շուկա իրենց գյուղատն-

Արտահանման ծավալների ավելացում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է «Սպայկա» ՍՊԸ տնօրեն Դավիթ Ղազարյանին:

Հանդիպման նպատակն էր՝ քննարկել դեպի Ռուսաստան տեղական գյուղմթերքի արտահանման ծավալների ավելացման հնարավորությունը: «Ինչպես տեղյակ եք, թուրքական գյուղմթերքի ներմուծումը Ռուսաստանի Դաշնությունն սահմանափակվել է: Դա լայն հնարավորություններ է ստեղծում հայ արտադրողների համար ավելացնելու դեպի ռուսաստանյան շուկա արտահանման ծավալները: Նախատեսական առևտրի հետ կապված, ևս ավելանում է արտադրանքի պահանջարկը, ուստի անհրաժեշտ է մշակել կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ արտադրության և արտահանման ծավալներն ավելացնելու համար», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը:

Միաժամանակ նախարարը հավելել է, որ կա հնարավորություն կտրուկ ավելացնել արտահանման ծավալները՝ նշելով որ հայկական գյուղմթերքը թեև որակական բարձր հատկանիշներ ուներ, սակայն, գնի առումով մրցունակ չէր թուրքականի համեմատ:

Գյուղմթերքի թվում, որոնց արտահանման ծավալները կարելի է ավելացնել, նախարարը, մասնավորապես, նշել է թարմ պտուղ-բանջարեղենը և մսամթերքը: Բացի այդ, նախարարը նաև կարևորել է դեպի Ռ-Դ արտահանվող գյուղմթերքի տեսականին:

Ընկերության տնօրեն Դավիթ Ղազարյանն, իր հերթին, նշել է, որ Թուրքիայից դեպի Ռուսաստան արտահանվում էին հիմնականում ջերմոցային ապրանքներ: Այս ենթատեսքերում նա նշել է, որ հայրենի արտադրողները նույնպես կարող են ավելացնել հատկապես ջերմոցային պայմաններում արտադրված գյուղմթերքի ծավալները:

Նախարար Կարապետյանը նշել է նաև, որ անհրաժեշտ է ավելացնել տրանսպորտային միջոցների քանակը՝ հաշվի առնելով արտահանման ծավալների ավելացումը:

Հանդիպման ավարտին, նախարարը հանձնարարել է փոխնախարար Ռոբերտ Մակարյանին՝ հարցի կարգավորումը պահել ամենօրյա ուշադրության կենտրոնում և խնդիրների առաջացման դեպքում, անմիջապես գեկուցել իրեն, առաջիկայում կազմակերպել հանդիպում նաև հանրապետությունում գործող մյուս արտահանող ընկերությունների հետ:

Նոր հնարավորություն հայ արտադրողների համար

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է հանրապետության մսամթերք արտադրողների հետ՝ ոլորտի ընթացիկ խնդիրները քննարկելու նպատակով: Հանդիպմանը մասնակցում էին՝ Հայաստանի մսամթերք արտադրողների միության նախագահ Արամայիս Բիլյանը, ոլորտում գործող մի շարք առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ:

«Շուրջ մեկ տարի է, ինչ ստեղծվել է գործում է Հայաստանի մսամթերք արտադրողների միությունը: հանդիպումը նպատակ ունի համատեղ քննարկել առկա խնդիրները՝ դրանց արդյունավետ լուծումներ տալու նպատակով», - նշել է նախարարը: Ըստ Ս. Կարապետյանի՝ Հայաստանի ԵՏՄ անդամակցության արդյունքում էականորեն դյուրինացել են հայրենական արտադրանքի արտահանման գործընթացները, սակայն մսամթերքի արտահանման ծավալները դեռևս բավարար չեն, և այդ ուղղությամբ պետք է լրացուցիչ քայլեր ձեռնարկել: Սերգո Կարապետյանը նաև հավելել է, որ Ռ-Դ կողմից թուրքական գյուղմթերքի ներմուծման սահմանափակումը նոր հնարավորություններ է ստեղծում հայ արտադրողների համար: Բացի այդ, մեր արտադրողներն արդեն կարող են ռուսական շուկա արտահանել նաև բասուրում և սուզուխ, ինչը նա մեկ խթան է մսամթերքի արտահանման ծավալների ավելացման համար: Իրենց հերթին մի շարք արտադրողներ նշել են, որ արտահանման ծավալներն այս պահին ավելանում են, հայկական մսամթերքը որակյալ է, մրցունակ և ճիշտ աշխատանքի դեպքում կարող է մեծ պահանջարկ ունենալ ռուսական շուկայում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարն առանձնահատուկ շեշտել է տեղական շուկայում մսի իրացման հարցերի կարգավորման անհրաժեշտությունը: Նախարարը նշել է, որ վերջին տարիներին «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման արդյունքում՝ հեռազևա լեռնային արտադրարների ջրարբիացման շնորհիվ, հանրապետությունում զգալիորեն ավելացել է անասնազիջանակային և հորդորել է մսամթերք արտադրողներին, հատկապես նախատեսական առևտրի շրջանում, երբ գյուղատնտեսական կենդանիների մորթն ավելանում է, աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ մսի իրացման հարցում: Նախարար Կարապետյանն առաջարկել է ընկերություններին՝ առավել ակտիվորեն համագործակցել սպանդանոցների հետ, ինչը նրանց հնարավորություն կտա մեր ազգաբնակչության և ապահովել առավել անվտանգ, որակյալ մսամթերքով: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ոլորտի զարգացմանն առնչվող մի շարք այլ հարցեր ևս:

ՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը զգուշացնում է

Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտում խաղողի վազերը ցրտահարությունից պաշտպանելու նպատակով, տասնամյակներ շարունակ կատարվել է այգեթաղ: Չնայած վերջին տարիներին գրանցված և «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից առաջիկա ձմռան համար կանխատեսվող բարենպաստ ջերմաստիճանային ռեժիմին, այնուամենայնիվ, չի բացառվում, որ առանձին օրերի ընթացքում կարող են դիտվել խիստ սառնամանիքներ: Չպետք է մոռանալ, որ խաղողի վազի լավ հասունացած ու փայտացած մատերը կարող են դիմանալ մինչև -16 °C ցրտերին, իսկ դրանից ավելի ցածր ջերմաստիճանների դեպքում, արդեն կորուստներն անխուսափելի են:

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հորդորում է խաղողագործներին, օգտվելով ներկայիս բարենպաստ եղանակային պայմաններից, սեղմ ժամկետում ավարտել այգեթաղի աշխատանքները, որպեսզի կայուն երաշխիքներ ստեղծվեն հաջորդ տարվա բարձր բերքի ստացման համար:

տեսական արտադրանքի, այդ թվում՝ պտուղ-բանջարեղենի արտահանման ծավալները», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարար Կարապետյանի խոսքով՝ այժմ մենք հանրապետությունում ունենք բավարար քանակությամբ թարմ պտուղ-բանջարեղեն, այդ թվում՝ խաղող, խնձոր, կաղամբ, ծաղկակաղամբ, բազուկ, կարտոֆիլ, գագար, ինչպես նաև՝ ջերմոցային արտադրանք, որը կարող ենք արտահանել ռուսական շուկա: Նախարարն ընդգծել է, որ հայ արտադրողներն ունեն հնարավորություն՝ ավելացնելու արտա-

հանվող գյուղմթերքի ծավալները և հորդորել է այս ուղղությամբ համապատասխան աշխատանքներ իրականացնել: Գյուղատնտեսության նախարարը հայտնել է, որ այժմ խոշոր արտահանողները տրանսպորտային միջոցներն ավելացնելու քայլեր են ձեռնարկում:

Հանդիպման ընթացքում նախարարը ծանոթացել է արտահանող ընկերությունների ներկայացուցիչներին հուզող խնդիրներին և խոստացել, որ պետությունն իր կողմից պատրաստ է աջակցել արտահանումներն առավել արդյունավետ կազմակերպելու հարցում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Քննարկել են մարզի հիմնախնդիրները

1



Մի քանի տարի առաջ, սկսեցինք սուբսիդավորել վարկեր, սկսեցինք գյուղացիներին տրամադրել ավելի մեծ չափով վարկեր, անհրաժեշտության պարագայում՝ այդ վարկերը վերաձևակերպել՝ կապված դժվարությունների հետ, և հիմա ես չեմ ասում, որ բոլորը հնարավորություն ունեն օգտվելու մատչելի վարկային ռեսուրսներից, բայց այսօրվա իրավիճակը, իհարկե, չի կարելի համեմատել հինգ տարի կամ տասը տարի առաջվա հետ:

Դրական փաստ է, որ այս տարի բերքը համեմատաբար առատ է, բայց ցավոք, որոշակի բարդություններ եղան, և այդ բարդություններին՝ գյուղատնտեսության նախարարության, կառավարության ջանքերով, մենք լուծումներ տվեցինք: Այնուհանդերձ պետք է մտածենք, թե ինչպե՞ս ենք այս խնդիրները լուծելու հաջորդ տարի: Գիտեք, որ այդ բարդությունների հիմնական մասը պայմանավորված էր մեր արտադրանքի սպառման շուկաներում եղած բարդությունների հետ. կարծում եմ, պետք է փնտրել ժամանակակից և արդյունավետ լուծումներ:

Խոսելով գյուղատնտեսության մասին՝ ես չեմ համարում, որ մեր ուշադրությունը միայն այս ուղղությամբ պետք է բևեռենք, որովհետև նախ՝ քաղաքային բնակչության համար աշխատատեղ ստեղծելը շատ կարևոր է, մյուս կողմից էլ՝ Արմավիրում գյուղական բնակավայրերը բավականաչափ խոշոր են, և այստեղ էլ պետք է մտածենք մարդկանց զբաղվածության մասին: Ուստի, մեր ուշադրությունը պետք է ուղղվի առաջին հերթին վերամշակող արդյունաբերությանը, և քանի որ այս ուղղությամբ Կառավարությունն ունի ծրագիր, օգտվելով այդ ծրագրի ընձեռած առավելություններից՝ պետք է խրախուսել մարդկանց՝ այս ուղղությունը զարգացնելու համար: Բայց նաև հասկանալի է մթերոդի կամ սպառողի ցանկությունը՝ ունենալու համար որակյալ ապրանք: Այստեղ էլ մենք պետք է գնանք մի ճանապարհով, որն ընդունված է ամբողջ աշխարհում, նկատի ունեն՝ առաջնակարգ գյուղատնտեսություն ունեցող աշխարհում, և այն կամաց-կամաց տարածվում է Հայաստանում: Մեր արտադրած ապրանքը պետք է լինի միանման և մրցունակ: Այսինքն՝ Նոր, ավելի արդյունավետ այգիներ հիմնելու մեծ անհրաժեշտություն կա: Անշուշտ, որպեսզի և՛ գյուղատնտեսության, և՛ արդյունաբերության, առաջին հերթին, վերամշակող արդյունաբերության խնդիրները կարողանանք հաջողությամբ լուծել, մեզ անհրաժեշտ են լավ և որակյալ կրթական ու առողջապահական ծառայություններ մատուցող համակարգեր: Մենք տարբեր ծրագրեր ենք իրականացում, և դրանց նպատակն է՝ ստեղծել Նոր համակարգ և լավ պայմաններ», - ասել է Նախագահը:

Մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, ըստ ոլորտների, հանգամանորեն ներկայացրել է Արմավիրի մարզում իրականացված և դեռևս ընթացքում գտնվող աշխատանքները, հիմնախնդիրներն ու գերակայությունները: Խորհրդակցությանը մասնակցող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶ) գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյանը զեկուցել է Հիմնադրամի առաջին քաղաքիչով մարզի համայնքներում նախատեսվող ներդրումների վերաբերյալ: Խորհրդակցության ավարտին՝ Սերժ Սարգսյանը մի շարք հանձնարարական-

ներ է տվել: Մասնավորապես՝ գյուղատնտեսական մթերք արտադրող գյուղացիական տնտեսություններին և վերամշակող ձեռնարկություններին՝ շարունակական աջակցության նպատակով, ՀՀ Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարներին հանձնարարվել է՝ գյուղատնտեսական մթերք, մասնավորապես՝ պտուղ-բանջարեղեն և խաղող վերամշակող և արտահանող ընկերությունների ղեկավարների հետ քննարկել տեղական արտադրանքի արտահանումը խթանելու հնարավորությունները՝ համապատասխան գործուն մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարին հանձնարարվել է՝ մարզպետի հետ համատեղ, քննարկել մարզում պտղի և հատապտղի տնկարկների ավելացման և մշակության ինտենսիվացման, մասնավորապես՝ Նոր ինտենսիվ այգիների հիմնման միջոցով, ներդրումային ծրագրերի առաջնության համար համապատասխան միջոցառումների իրականացման ուղիները՝ միաժամանակ, առաջարկություններ մշակելով գյուղացիական տնտեսություններին թիրախային խորհրդատվական ծառայությունների մատուցման, ինչպես նաև մթերման և թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման աշխատանքների պլանավորման կարողությունները շարունակաբար բարելավելու ուղղությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետին հանձնարարվել է՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի հետ համատեղ, քննարկել մարզի ոռոգման համակարգերի շարունակական զարգացման առաջնահերթությունները՝ առաջիկայում նախատեսվող ծրագրերում ներառելու նպատակով, համապատասխան առաջարկությունները ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Արմավիրի մարզի անասնաբուժական մթերքի վերամշակման շղթայի կատարելագործման և սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարարին հանձնարարվել է՝ քննարկել նախարարության կողմից իրականացվող առաջիկա ծրագրերի շրջանակներում, Արմավիրի մարզում ժամանակակից սպանդանոցների կառուցմանը համակողմանի աջակցության տրամադրման հնարավորությունը՝ համապատասխան առաջարկությունները ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Բնական աղետներից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների պաշտպանության մեխանիզմների շարունակական բարելավման նպատակով, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին հանձնարարվել է՝ միջոցներ ձեռնարկել ՀՀ Արմավիրի մարզում հակակարկտային համակարգերի ազդեցության գոտու ընդլայնման և կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ համապատասխան ֆինանսական աղբյուրների վերաբերյալ գնահատականները ներկայացնելով ՀՀ կառավարության քննարկմանը:

Մարզի համայնքների գազաֆիկացման ցանցի ընդլայնման նպատակով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին հանձնարարվել է Արմավիրի մարզպետի հետ համատեղ, ուսումնասիրել մարզի գազաֆիկացման պահանջարկ ունեցող համայնքներում անհրաժեշտ ներդրումների ծավալները՝ ելնելով պոտենցիալ բաժանորդների հստակ թվաքանակներից համապատասխան տեխնիկատնտեսական արդյունավետության հաշվարկները ներկայացնելով ՀՀ կառավարություն և «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ՝ ներդրումային առաջնահերթություններում հաշվի առնելու նկատառումով:

ԱՍՈՒԼԻՍ

Ընթացիկ արդյունքների ամփոփում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը ներկայացրել է ընթացիկ տարվա պտուղ-բանջարեղենի մթերումների և արտահանումների տվյալները:

Փոխնախարարի խոսքով՝ այս պահի դրությամբ, վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 63 700 տոննա պտուղ-բանջարեղեն և 216 800 տոննա խաղող, որը համապատասխանաբար՝ 16.2 հազար տոննայով (34%-ով) և 32.7 տոննայով (17.8%-ով) ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ պտուղ-բանջարեղենի արտահանման ծավալը կազմել է շուրջ 70 200 տոննա, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը գերազանցում է ավելի քան 28 հազար տոննայով կամ շուրջ 68 տոկոսով:



Ռ. Մակարյանը հավելել է, որ այս տարի հայկական գյուղմթերքի մոտ 84 տոկոսն արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն: Անդրադառնալով մթերումների խնդիրներին՝ նա հատկապես կարևորել է պայմանագրային հարաբերությունների խորացումը գյուղացիական տնտեսությունների և վերամշակողների միջև, ինչը թույլ կտա մթերումների գործընթացն առավել սահուն կազմակերպել և խուսափել մի շարք խնդիրներից:

Մակարյանը նշել է, որ 2015 թվականին պտուղ-բանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունները գյուղացիական տնտեսությունների հետ կնքել են թվով 13433 պայմանագիր, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 11 տոկոսով: Պայմանագրերի շրջանակներում, գյուղացիական տնտեսություններին տրամադրվել են կանխավճար, բուժանյութեր, պարարտանյութ և այլ օժանդակություն:

Փոխնախարարի խոսքով՝ այս պահին հիմնական խնդիրը խաղողի մթերումների դիմաց վճարումների իրականացման հարցն է, որը գտնվում է գյուղատնտեսության նախարարության ուշադրության կենտրոնում, և կառավարությունը մատչելի տոկոսադրույքով վարկեր է տրամադրում ֆինանսական խնդիրներ ունեցող ընկերություններին՝ մթերումների դիմաց գյուղացիական տնտեսությունների վճարումներն իրականացնելու նպատակով:

Փոխնախարարն անդրադարձել է նաև գյուղատնտեսական տոնավաճառների կազմակերպմանը՝ նշելով, որ այս տարի մայրաքաղաքում անց է կացվել թվով 83 տոնավաճառ և արձանագրվել է 10 800 մասնակցություն:

ԳԻՆԵՏՈՆ

Երևանում մեկնարկել է գինու առաջին համադաս-տոնավաճառը

Օրերս մայրաքաղաքի Հյուսիսային պողոտայի տարածքում մեկնարկել է առաջին անգամ անցկացվող գինու համադաս-տոնավաճառ, որը կազմակերպվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Երևանի քաղաքապետարանի կողմից:

«ՀՀ գյուղատնտեսության նախարարի նախաձեռնությամբ և մտահղացմամբ, Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ, սկսում ենք հայկական գյուղմթերքի և վերամշակված արտադրանքի տոնավաճառների և ցուցահանդեսների հայրենական արտադրանքի խթանման նպատակով: Նմանատիպ միջոցառումները կկրեն շարունակական բնույթ և կկազմակերպվեն նաև 2016 թվականին», - նշել է գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը: Անդրադառնալով գինու համադաս-տոնավաճառի կազմակերպմանը՝ փոխնախարարը նշել է, որ այս տարի հանրապետությունում արտադրվել է շուրջ 4 մլն լիտր գինի, և այս միջոցառումը շատ կարևոր նախաձեռնություն է՝ գինու իրացման և օգտագործման մշակույթի տարածման առումով:

«Սա առաջին գինու համադաս-տոնավաճառն է Երևանում, որով փորձում ենք նախատեսական օրերի շեմին մեր բնակիչներին հնարավորություն տալ համոզվելու լավ գինի, նաև գնումներ կատարելու: Երկու գերատեսչությունների նպատակն է՝ աջակցել գյուղացիներին, որ իրենց արտադրանքը բերեն հասցնել վերջնական արդյունքին՝ իրացմանը, այդպիսով կզարգացնեն և կբարելավեն իրենց գործունեությունը: Այս առումով, մենք պատրաստակամ ենք արձագանքել գյուղատնտեսության նախարարության բոլոր նախաձեռնություններին», - նշել է Երևանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը: Միջոցառմանը մասնակցում են գինեգործական մոտ 23 ընկերություններ և անհատ գինեգործներ Վայոց ձորի մարզից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է իր արտադրանքի ողջ տեսականին: Գինու համադաս-տոնավաճառը միտված է նաև նպաստել Հայաստանում տուրիզմի զարգացմանը և ներկայացնել մասնակիցներին հայ գինեգործության լավագույն ավանդույթները:

ՍԵՄԻՆԱՐ

ԿՈՄՊՈՍՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՇԵՆԱՆԱՅԻՆ ԷՏԻ ՑՈՒՑԱԴԻՐՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

«Շեն» ԲՀԿ-ն շարունակում է Վայոց ձորի մարզում այգեգործության զարգացմանը միջոցառումների իրականացումը: Օրերս ՀԿ-ի կողմից, «Մյունիք-Զարգացում» ՀԿ-ի հետ միասին, Եղեգնաձորում կազմակերպվել էր հերթական սեմինար-հանդիպումը՝ մարզի այգեգործների հետ:

Սեմինարն իրականացվել է Շվեյցարական EPER, «Էկոլաբ» ծրագրի համաֆինանսավորմամբ և համագոր-

գաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ: Ֆերմերները նշեցին, որ աշնան այս օրերին էլ են զբաղված, գյուղում միշտ էլ գործ կա. մասնագետների այցելությունները շատ են կարևորում, սովորելու համար մեկ մարդու պես հավաքվում են:

«Շեն» ՀԿ-ի գյուղատնտես Սիմոն Ասատրյանը համայնքում, շահառու ֆերմեր Միեր Ավարդյանի տնտեսությունում, կազմակերպեց աշնանային էտի ցուցադրում: Մասնագետը կարևորեց աշնանային էտի առավելություններն ու իրականացման տեխնոլոգիան: Ճիշտ էտի միջոցով կարելի է ձևավորել հաջորդ տարվա բերքը:

Հաջորդ մարզկենտրոնից 25 կմ հեռավորությամբ գտնվող Ռինդ համայնքն էր: Համայնքում բնակչությունը հիմնականում զբաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ: Քիչ չեն նաև պտղատու այգիները (խնձոր, տանձ, սալոր, դեղձ): Ռինդում Ս. Ասատրյանը, ֆերմեր Արթուր Գրիգորյանի այգում, սեմինարի մասնակիցների ներկայությամբ, կատարեց աշնանային էտի աշխատանքներ: Ներկաներն իրենց հուզող հարցերով քննարկեցին և ամփոփեցին հանդիպումը:

Բոլոր մասնակիցները ՀԿ-ի կողմից ստացան մի շարք ձեռնարկներ՝ «Կենսահումուս», «Բուժանյութեր օրգանիկ»:



ձակցությամբ: Սեմինարի ընթացքում, ՀԿ-ի գյուղատնտեսական ծրագրերի խորհրդատու Վարազդատ Մաթևոսյանը ներկայացրեց կենսահումուսի և կոմպոստի ընդհանուր բնութագիրը, պատրաստման տեխնոլոգիաները և գյուղացիական տնտեսությունների համար՝ որպես օրգանական պարարտանյութ, դրանց կիրառման արդյունավետությունը: Այնուհետև ներկաները դիտեցին փոքրիկ ֆիլմ՝ «Կենսահումուս և կոմպոստի պատրաստում» վերնագրով: Հանդիպմանը ներկա շահագրգիռ ֆերմերների մասնակցությամբ, քննարկվեցին կենսահումուսի կիրառման առանձնահատկությունները, հողի հարստացման և արդյունավետությանը վերաբերող հարցեր:



Տեսական ուսուցումից հետո, ըստ օրակարգի, «Մյունիք-Զարգացում» ՀԿ-ի Աղասաֆի կոչվող փորձացուցադրական այգում կատարվեց նաև կոմպոստի պատրաստման տեխնոլոգիայի ցուցադրություն՝ ֆերմերների անմիջական մասնակցությամբ:

Այնուհետև բոլոր մասնակիցներն այցելեցին Վայոց ձորի մարզի Աղավնաձոր համայնք: Համայնքի վարչական տարածքը 4682 հա է, որից՝ 466 հա-ն վարելահողեր են, 1071 հա-ն՝ արոտավայրեր, իսկ 379 հա-ն՝ այգիներ: Այստեղ աշունը երկարատև է ու տաք. եղանակային նման պայմաններում հասունանում են մրգերն ու «Արենի» սորտի խաղողը: Աղավնաձորում հիմնականում

նական գյուղատնտեսության համար» և «Օրգանական գյուղատնտեսության խթանում», որոնք հասանելի են նաև ՀԿ-ի գյուղատնտեսական գրադարանում: «Մյունիք-Զարգացում» ՀԿ-ի համայնքային և երիտասարդական ծրագրերի ղեկավար Նաիրա Հարությունյանն ու սեմինարի մասնակիցներն իրենց գոհունակությունը հայտնեցին «Շեն» ԲՀԿ-ի ներկայացուցիչներին՝ զարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում կրկին հանդիպելու ակնկալիքով:

Լիանա Շահնազարյան

ԲՆԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՊՈՒՄ

ԿՈՂԲ ԳՅՈՒՂՈՒՄ ՏՆԿՎԵԼ Է ՇՈՒՐՁ 120 ՀԻՄԱԼԱՅԱՆ ՄԱՅՐԻ

ՀՀ Տավուշի մարզի Կողբ գյուղում տնկվել է շուրջ 120 հիմալայան մայրի:

Ծառատունկն իրականացվել է Կողբի արվեստի դպրոցի և տեղի միջնակարգ դպրոցի տարածքներում՝ «Մայրի» ֆեյսբուքյան խմբի անդամների, դպրոցականների, ուսուցիչների, արվեստի դպրոցի սաների, «Ձիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների մասնակցությամբ:

Ծառատունկին մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը: Տնկիները տրամադրվել էին ՀՀ բնապահպանության նախարարության «Ձիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնկարաններից: Այս մասին հայտնում է ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը:

www.ecolur.org

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԻՆ

Արարատի մարզի Չանգակատուն համայնքում Orange Գիմնադրամի կողմից իրականացվող «Մեկ գյուղ» ծրագիրն արդեն մեկնարկել է իրականացված և ընթացիկ աշխատանքներին ծանոթանալու նպատակով, գյուղ էին այցելել Գիմնադրամի և ծրագրին իրականացնող «ՅՕՖ»-ի ներկայացուցիչները:

Ծրագրի նպատակն է՝ արմատական փոփոխություններ կատարել ընտրված մեկ գյուղական համայնքի կյանքում հիմնարար ոլորտներում, նպատակային ներդրումների շնորհիվ՝ ներառյալ տնտեսական գործունեություն, կրթություն, առողջապահություն և ջրամատակարարում: «Մեկ գյուղ» ծրագիրն իրականացվում է ՅՕՖ-ի հետ համատեղ՝ համայնքի բնակիչների անմիջական մասնակցությամբ: Ծրագրին Orange Գիմնադրամի հատկացված ֆինանսական աջակցությունը կազմելու է 51 միլիոն դրամ:

Հաշվի առնելով Չանգակատուն համայնքի բնակիչների զգալի մասի զբաղվածությունը խնձորի մշակմամբ՝ «Մեկ գյուղ» նախագծի շրջանակներում նախատեսվում է ստեղծել գյուղատնտեսական կոոպերատիվ՝ հագեցած խնձորի այգիների մշակման և խնձորի չրերի արտադրության համար նախատեսված համապատասխան սարքավորումներով: Բացի այդ, կոոպերատիվի անդամների համար կազմակերպվելու են դասընթացներ, ինչը թույլ կտա բարձրացնել այգեգործության և չրերի արտադրության, շուկայավարման և իրացման արդյունավետությունը: Գիմնադրամի ներկայացուցիչներն այցելել են չրանոցի տարածք, որտեղ ընթանում են շինարարական աշխատանքները,

որոնց կամավորության սկզբունքով մասնակցում են նաև Orange Արմենիա ընկերության աշխատակիցները:

Ծրագրի միջոցով ֆինանսական միջոցներ են հատկացվելու համայնքի ոռոգման համակարգի վերականգնման համար, ինչը թույլ կտա մեծապես կրճատել ջրի կորուստը և հնարավորություն կստեղծի 40 հա-ով ընդլայնել խնձորի այգիներն ու օգտագործել ջրի սղության հետևանքով նախկինում անմշակ հողատարածքը:

«Մեկ գյուղ» նախագծի շրջանակներում վերանորոգվելու է Չանգակատուն գյուղի բժշկական ամբուլատորիան, որը սպասարկում է նաև հարևան 4 համայնքների բնակիչներին: Այցի ընթացքում ամբուլատորիային է հանձնվել հատուկ տրանսպորտային միջոց՝ հարևան գյուղերի բնակիչների համար բժշկական ծառայությունների հասանելիությունը ապահովելու համար: Արդեն իսկ ավարտվել են համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները, ինչը հնարավորություն է ստեղծել լիարժեք կազմակերպել մանկապարտեզ հաճախող երեխաների առօրյա: Երեխաների ճիշտ սննդակարգն ապահովելու համար մանկապարտեզի անձնակազմի և ծնողների համար անցկացվելու են հատուկ դասընթացներ:

Ծրագրի շրջանակներում նաև վերազինվել է գյուղի դպրոցի համակարգչային դասարանը, ինչպես նաև տրամադրվել համապատասխան պարագաներ՝ գործող արտադասարանային խմբակների դասերն առավել արդյունավետ և հետաքրքիր կազմակերպելու համար: Դպրոցում ստեղծվելու է նաև Երիտասարդների ակումբ:

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ՝ ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լոռու մարզի Արևածագ համայնքի ֆերմերային խումբն այսուհետ կզբաղվի նաև հատապտուղների մշակությամբ: 2015թ-ի նոյեմբերի 11-12-ին Արևածագ համայնքի ֆերմերային խումբը, Վորլդ Վիժն կազմակերպության աջակցությամբ, երկօրյա ուսուցումներ ստացավ հատապտուղների մշակության և մարքեթինգի ոլորտում: Երկու օրը հիմնականում բաղկացում է կարտոֆիլագործությամբ և մոնոկուլտուրայի մշակության հետ կապված, երբեմն խնդիրներ են ունենում: Նրանք ցանկանում են դիվերսիֆիկացնել իրենց արտադրությունը, որն, անշուշտ, կմեղմացնի ռիսկերը և կստեղծի այլընտրանքային եկամտի ստացման հնարավորություն:

դին և վարդագույն ազնվամորենու մի շարք սորտերին և մշակության լարսայունային համակարգին:

Պրակտիկ կերպով ցուցադրվեցին



Մասնակիցները թվով 9 ֆերմերներ էին, որոնց շարքում կային նաև 3 երիտասարդներ, ինչն անչափ հուսադրող և գովելի էր: Խմբի հետ էր նաև World Vision-ի Լոռու մարզի տնտեսական ծրագրերի զարգացման ղեկավար Նարեկ Կարելիսյանը: Առաջին օրն այցելեցին «Կանաչ արահետ» ՀԿ-ի գրասենյակ, որտեղ ստացան տեսական գիտելիքներ հատապտուղների՝ հատկապես ազնվամորու մշակության և շուկայական հարաբերությունների ձևավորման ոլորտում: Երկրորդ օրը գործնական ուսուցման և փորձի փոխանակման նպատակով, այցելեցին Կանաչ ուսուցման կենտրոն, որտեղ ստացան գործնական գիտելիքներ և ծանոթացան տեղում մշակվող բարձրածր մի շարք հատապտուղների՝ անփուշ մոշի, հապլոսի, լոռամրգենու, սև, կարմիր և սպիտակ հաղարջենու, կրկռոշենու, բազմաբերք ելակի, ինչպես նաև սև, դե-

նաև այդ մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները, մասնակիցներն ականատես եղան կաթիլային ոռոգման համակարգի առավելություններին, կոմպոստի պատրաստման և մուլչապատման տեխնոլոգիաներին: ՀԿ-ի տնօրեն Նուրե Սարուխանյանը մանրամասնորեն պատասխանեց նաև ֆերմերների բազմաթիվ հարցերին: Ֆերմերները տպավորված էին և հույս հայտնեցին, որ այդ ամենը կկիրառեն նաև իրենց տնտեսություններում:

Միջոցառման մասնակից ֆերմերները Կանաչ ուսուցման կենտրոնից դատարկածն չհեռացան, նվերների հետ միասին տրամադրվեց ազնվամորենու բարձրածր սորտերի մի քանի հարյուր տնկիներ: Թե՛ հյուրընկալող կողմը, և թե՛ այցելուները կարևորեցին նմանատիպ այցերը և խնդրեցին, որ դրանք այսուհետ պարբերական բնույթ ստանան:

«Կանաչ արահետ» ՀԿ

ԾՐԱԳԻՐ

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Գյուղական աղքատության կրճատմանը ՀՀ-ում համարվում է հիմնախնդրային՝ կապված գյուղում տնտեսավարման բարձր ռիսկայնության, ցածր եկամտաբերության և նոր տեխնոլոգիաների կիրառման բացակայությամբ:

Ահա այս խնդրի մեղմացման նպատակով, «Հյուսիսային Դիստրիկտ Ընդ Փխ» (HDP) բարեգործական հիմնադրամը, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության

համախառն բերք, որը շահառու 15 ընտանիքների համար ստեղծել է լրացուցիչ եկամուտ:

Այժմ կարելի է ասել, որ ֆերմերները հստակ տիրապետում են մեթոդի կիրառման առանձնահատկություններին և ի վիճակի են այն տարածել իրենց հարևանների և մտերիմների շրջանում:

Բացի այդ, որպես եկամտի ստեղծման այլընտրանքային միջոց՝ համայնքի մանկապարտեզի համար կառուցված 100 մ² պոլիէթիլենային ջերմոցից հավաքվել է բանջարեղենի համախառն 300 կգ էկոլոգիապես մաքուր բերք՝ լոլիկ, վարունգ, լոբի և հատկացվել է նախակրթարանի 80 սաներին:

Ուրախությամբ պիտի փաստենք, որ HDP Հիմնադրամի նախաձեռնությամբ և SDC-ի աջակցությամբ, ծրագրի շահառուների կողմից աճեցված բերքը ներկայացվել է նաև Երևանում կազմակերպված «Գյուղական կյանքի և ավանդույթների» փառատոնին, որը նախաձեռնել էին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, «Կանաչ արահետ» ՀԿ-ն և Երևանի քաղաքապետարանը:

Փառատոնին մասնակցում էին՝ ՀՀ տարբեր մարզերից և Վրաստանից ժա-



(SDC) ֆինանսավորմամբ, 2015թ.-ի մայիսից ՀՀ Կոտայքի մարզի Արգել համայնքում իրականացնում է «Կենսամակարդակի բարելավման քայլեր Արգել համայնքում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները հիմնականում նպատակաուղղված են գյուղատնտեսության մեջ կիրառվող բարձր բերքատվություն ապահովող նոր տեխնոլոգիաների կիրառմանը, սեփական ուժերի նկատմամբ ամրապնդելու ֆերմերների վստահությունը, զարգացնելու կարողությունները՝ տրամադրելով նրանց



մանած ֆերմերային խմբեր, կոոպերատիվներ, անհատ ձեռներեցներ, որոնք ներկայացնում էին իրենց կողմից արտադրված թարմ, չորացված և մշակման ենթարկված գյուղատնտեսական մթերքները:

Հարկ է նշել, որ շահառուների կողմից աճեցված էկոլոգիապես մաքուր բանջարեղենը մեծ ուշադրության արժանացավ այցելուների կողմից և ամբողջովին վաճառվեց:

Համոզված ենք, որ համայնքի բնակիչների համար կայուն եկամուտ ստեղծելու այս ծրագիրը կհամախմբի համայն-

մատչելի, սակայն բովանդակալից տեղեկատվություն և գիտելիքներ, թե ինչպես աճեցնել ավանդական և ոչ ավանդական բանջարեղեն:

Իրականացվող ծրագրի շրջանակներում, շահառու ընտանիքներին ուսուցանվել է բանջարաբուծության բարձր բերքատվություն ապահովող «Միթյայրերի մեթոդը», որն՝ ավանդական մշակության համեմատ, 2-3 անգամ ավելացնում է ստացվող բերքի քանակը. այն իր մեջ ներ է առնում որոշ տարրեր ջերմոցային բանջարաբուծության բնագավառից, սակայն հարմարեցված է ընտանեկան փոքր այգիների համար:

Կազմակերպվել են տեսական և գործնական դասընթացներ: Թե՛ շահառուների հողակտորներում և թե՛ ջերմոցում, ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին և պատշաճ կիրառման արդյունքում, ստացվել է մոտ 3.2 տոննա



քի այլ ֆերմերների և՛ իրենց տնամերձ հողակտորներում, ընդօրինակելու և կիրառելու փորձը, ինչը ուղղակիորեն կավելացնի նրանց եկամուտները:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՍՈԼԱԿՈՒՄ ԿԼՈՒԾՎԻ ԱՐՈՏՆԵՐԻ ԶՐԱՐԲԻԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀՀ Կոտայքի մարզի Սուլակ համայնքի արոտագտագործողների սպառողական կոոպերատիվը ձևավորվել է ընթացիկ տարվա ապրիլին՝ «Արոտավայրերի բարելավման ծրագրի» շրջանակում: Այն արդեն ունի 120 անդամ: Կոոպերատիվը շատ կարևոր խնդիրներ է դրել իր առջև, որոնք քայլ առ քայլ պետք է իրականացնի:

Սուլակ համայնքի արոտագտագործողների սպառողական կոոպերատիվի նախագահ Սամվել Կապույանը լուծում պահանջող ամենահրատապ հարցը համարեց արոտների ջրարբիացումը: Այդ նպատակով կառուցվելու է 3 կմ 100 մ երկարությամբ ջրագիծ, որի 1 կմ-ն արդեն պատրաստ է: Նախագահի տեղեկացմամբ, առաջիկայում ավարտին կհասցվեն նաև պոպոնկայանի կառուցման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում կառուցվելու է նաև 25 մ երկարությամբ 2 խմոց, որոնց շուրջ՝ մատակարարվելու է 30-40 տոննա տարողությամբ ջրավազաններից:

Սուլակում արոտավայրերը գերազանցում են 500 հա-ն: Դրանք հարուստ են բազմազան բուսատեսակներով, աչքի են ընկնում հատկապես ծաղկաշատությամբ: Սամվել Կապույանը նշում է, որ կան բոլոր բնական անհրաժեշտ պայմանները, որպեսզի կենդանիները հնարավորություն ունենան լիարժեք սնվելու, ինչը և բարձր կաթնատվության առաջին անհրաժեշտ և կարևորագույն պայմանն է: Սակայն, այսօր, խմելու ջրի բացակայության պատճառով, արոտավայրերի 60-70 %-ը դեռևս մնում է անօգտագործելի: Դրա հետևանքով կենդանիներին ստիպված արոտավայրեր չեն տանում: Ֆերմերները նշում են, որ ջրի առկայությունը նույնպես կնպաստի գյուղատնտեսական կենդանիների կաթնատվության 20-30 %-ով բարձրացմանը: Սուլակում այսօր խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը հասնում է 500-ի,



մանրիկը՝ գերազանցում է 1000-ը: Գյուղացիական փոքր տնտեսությունների վարումը նման պայմաններում դառնում է անարդյունավետ, քանի որ կաթնատվությունը շատ ցածր է: Արոտավայրերը գյուղից գտնվում են 10 կմ հեռավորության վրա: Ծրագրով նախատեսվում է նաև կենդանիների ամառային կացարանների կառուցում:

Ի դեպ, Սամվել Կապույանի հավաստմամբ, կոոպերատիվի անդամները որոշել են կենդանիների գլխաքանակն ավելացնել ավելի քան 50 %-ով:

Ծրագրի շրջանակներում, կոոպերատիվին հատկացվելու է նաև գյուղատնտեսական տեխնիկա: «Գյուղում առկա տեխնիկական հնամաշ է, դրանք օգտագործումն այլևս արդյունավետ չէ: Նախատեսվել ենք ձեռք բերել MT3 և DT մակնիշի տրակտորներ, խոտհնձիչ, մամլիչ, շարքացան, գութան և գյուղագործիքներ: Լիովին կլուծվի տեխնիկայի նորացման հարցը: Գյուղացին ֆինանսապես ի վիճակի չէ ինքնուրույն որևէ տեխնիկա գնել, իսկ կոոպերացիան տալիս է այդ հնարավորությունը», - ասում է Սամվել Կապույանը: Տեխնիկան տրամադրվելու է համաֆինանսավորման պայմանով, 80%-ը վճարելվու է ծրագրի միջոցներից, իսկ 20% -ը՝ կոոպերատիվի անդամների կողմից:

«Առավելություններից մեկն էլ այն է, որ կոոպերատիվի անդամների համար 60-70%-ով իջնելու է մատուցվող գյուղատնտեսական ծառայությունների արժեքը: Այսպես, օրինակ, մասնավոր գործունեություն ծավալողները հողի 1 հա վարը կատարում են 35 հազար դրամով, մեզ մոտ այն չպետք է գերազանցի 25 հազար դրամը, որպեսզի գյուղացին կարողանա վճարել և ոչ մի կտոր հող անմշակ չմնա», - հավելում է կոոպերատիվի նախագահը: Ի դեպ, ամռանն արդեն խոտհունձը կատարվել է 25 հազար դրամով, նախկին 40 հազար դրամի փոխարեն, ինչը ոգևորել է կոոպերատիվի անդամներին: Տնտեսության արդյունավետ կառավարումը կնպաստի նաև անդամակցողների եկամուտների ավելացմանը, ինչը տնտեսավարման այս եղանակի գերակա խնդիրներից է:

Նախատեսվել են հետագայում ստեղծել նաև կաթի վերամշակման արտադրամաս, ինչի անհրաժեշտությունն, ինչ խոսք, լինելու է՝ կենդանիների գլխաքանակի ավելացմանը զուգընթաց: Սամվել Կապույանի կարծիքով՝ կոոպերացիան կնպաստի նաև, որպեսզի կրճատվի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը, քանի որ գյուղատնտեսական մասնագետների անհրաժեշտություն կա:

Նելլի Սահակյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԼԻՍ Է ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ

Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան ստորոտում գտնվող Երանոս համայնքը մարզկենտրոն Գավառից հեռու է 25 կմ, այն գտնվում է Սևանա լճի ափին, ներկայիս սերունդների նախնիները գաղթել են 1828 թվականին՝ Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Խաստուր գյուղից:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5335 հեկտար, բնակչությունը՝ 5311 մարդ, հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի մշակությամբ:

Գյուղի հնագույն անունը Ձագ է



եղել, ներկայիս Երանոս անունը հունարենից թարգմանաբար նշանակում է խաղաղասեր, խաղաղարար: Գյուղատեղիներից են «Կուռու ավերակերը» և «Շողան աղբյուրը»:

Համայնքում ներկա պահին գործում են՝ երկու դպրոց, մշակույթի տուն, մուր-մանկապարտեզ, ընտանեկան բժշկական ամբուլատորիա, կոմունալ տնտեսության հիմարկ, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող առևտրի և սպասարկման բազմաթիվ կառույցներ:

2012 թվականի դեկտեմբերի 9-ից համայնքը ղեկավարում է Ապետնակ Մովսեսյանը: Նրա ղեկավարման տարիներին, պետական բյուջեի և համայնքի գործարարների ներդրած միջոցներով, ասֆալտապատվել են գյուղի կենտրոնական ճանապարհը՝ մայրուղուց մինչև գերեզմանոց, հիմնովին վերանորոգվել և միաժամանակ մի շարք թաղամասերի համար կառուցվել են խմելու խոր ջրագծեր, որի արդյունքում համայնքի ազգաբնակչությունն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, իսկ ոռոգման խողովակաշարի կառուցումով լուծվել է նաև համայնքի դժվար ոռոգվող երեք թաղամասերի ոռոգման ջրով ժամանակին ապահովման հարցը: Բավականին մեծ ծավալի աշխատանք է կատարվել

հեղեղատարների, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման համար, համայնքում այս պահին իրականացվում է արտավայրերի ջրարբիացման,



կառուցապատման ծրագիր, որի շրջանակներում ձեռք է բերվել մեկ միավոր տրակտոր. Նոր տեխնիկայի և կցասարքերի ձեռքբերման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԽՃԱՆԿԱՐ

ՏԱՆՁԱՆԻԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակ առ ժամանակ անդրադառնալով այլ երկրների գյուղատնտեսությանը՝ ուսանելի ենք համարում ոչ միայն զարգացած երկրների օրինակը, այլև՝ այն երկրների, որոնք անբավարար ռեսուրսների պայմաններում, այնուամենայնիվ, զարգացման հնարավորություններ են գտնում: Տանզանիան աշխարհի ամենաաղքատ երկրներից մեկն է, որի բնակչության 80 %-ից ավելին զբաղված է գյուղատնտեսությամբ՝ ապահովելով երկրի ՀՆԱ-ի կեսը: Գլխավոր խնդիրը, որ երկրի կառավարությունը ջանում է լուծել, սննդամթերքի հիմնական տեսակներով ապահովումն է:

Խիստ տարբերվող կլիմայական գոտիները թույլ են տալիս մշակել ամենազանազան մշակաբույսեր: Քիլիմանջարոյի ստորոտներում աճեցնում են՝ բանան, եգիպտացորեն, լոբազգիներ, կարտոֆիլ, բրինձ, մանգո, այս տեղերի համար ավանդական և բավական տարածված բանջարեղեն՝ տարո, օսլայով հարուստ պալարներով և մսոտ տերևներով: Սուրճը, կապված վերջին տարիներին տեղի ունեցած գների անկման հետ, զգալիորոն կրճատել է իր մշակման տարածքները: Գյուղատնտեսության արդյունավետությունը ծայրաստիճան ցածր է, արտահանվում է արտադրանքի



չնչին մասը:

Այստեղ գյուղացիների համար գյուղատնտեսությունն ասոցացվում է ծանր աշխատանքի հետ: Պետական աջակցությունը միանգամայն անբավարար է. չեն տրամադրվում խորհրդատվական ծառայություններ, բույսերի պաշտպանության միջոցներ, պարարտան-

յութ: Ինֆրակառուցվածքները, կարելի է ասել, լրիվ բացակայում են: Մոտակա շուկան, որը կիրումետրերի վրա գտնվում, հասնում են միայն ոտքով՝ տրանսպորտային համակարգի գրեթե լրիվ բացակայության պայմաններում: Բազում ընդհանուր խնդիրներ ստիպում են գյուղացիներին միավորվել կոոպերատիվներում, որտեղ արդեն մատչելի է դառնում խորհրդատվությունը, լուծվում են իրացման հետ կապված խնդիրները: Օրինակ՝ բրինձը, որ շուկա հանվող մշակաբույսերից մեկն է, հավաքվում է կոոպերատիվում կենրոնացված կերպով, ինչը հնարավորություն է տալիս շուկայի վրա ազդելու և անդամների համար նպաստավոր գներով իրենց արտադրանքն իրացնելու համար:

Բրնձից ավելի կարևոր, կարելի է ասել՝ ռազմավարական մթերք է բանանը, որոնք Տանզանիայում լինում է դեղին և կարմիր, մեծ և փոքր, քաղցր՝ և ոչ այնքան, բացի ուտելուց դրանից գարեջուր են պատրաստում, որը տեղացիները շատ են սիրում: Վաղուց և հաջողությամբ բանան աճեցնող մի քանի ֆերմերի պետությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում, որպեսզի նրանք բարելավեն բանանի մշակման ագրոտեխնիկան, նոր սորտեր փորձարկեն, իսկ հաջողված փորձը տարածեն: Արդյունքում՝ նրանք օպտիմալացրել են ոռոգման պայմանները, խտացրել ցանքերը և դեռ ամեն երկրորդ շարքից հետո՝ երրորդում, մշակում են բանջարեղեն, նաև սուրճ:

Գյուղատնտեսական կենդանիներից պահում են հիմնականում կով, սովորաբար՝ 1-3 հատ, նաև՝ խոզեր: Կովերի նախիրը խայտաբղետ է՝ զբերվից սկսած, մինչև քիչ թե շատ ցեղական կենդանի հիշեցնող: Արհեստական սերմնավորման ազգային կենտրոնը փորձում է հնարավորինս ցեղի բարելավման աշխատանքներ իրականացնել, իսկ առայժմ օրական 10 լիտր կաթ սովոր կովը տիրոջն ավելի քան բավարարում է: Հետաքրքրական և ուսանելի է Քիլիմանջարոյի ռեգիոնալ կոոպերատիվ բանկի օրինակը, որը պատկանում է թվով 263 գյուղատնտեսական կոոպերատիվի, որոնք էլ՝ իրենց հերթին, միավորում են 350 հազար մանր ֆերմերային տնտեսություններ:

Բանկի հիմնական ակտիվը սուրճն է, որը գյուղացին բերքահավաքից հետո հանձնում է բանկին, փոխարենը, անհրաժեշտության դեպքում, գումար է վերցնում: Բանկն իր վրա է վերցնում սուրճի իրացման գործընթացը՝ հնարավորություն ունենալով շուկայի



ավելի գրագետ վերլուծություն կատարելու և հնարավորինս թանկ վաճառելու այն՝ հիմնականում միջազգային մեծածախ շուկաներում: Այս բոլոր շարժերի մասին գյուղացին կանոնավոր կերպով տեղեկացվում է: Ի դեպ, տեղի բնակչությունը սուրճ գրեթե չի օգտագործում՝ նախապատվությունը տալիս է թեյին: Լինելով աղքատ երկիր՝ Տանզանիան միաժամանակ բնական մեծ հարստությունների տեր է և ունի զարգացման մեծ ներուժ, հատկապես՝ որ այստեղ զբոսաշրջիկների մեծ հոսք է նկատվում:

Երկու խոսք երկրի մասին: Տանզանիան գտնվում է Աֆրիկյան մայրցամաքի հարավ արևելյան մասում և զբաղեցնում է 945 կմ² տարածք, մայրաքաղաքն է՝ Դար-էս-Սալամը, օրենսդրական մայրաքաղաք Դոդոման է: Խոսում են ավելի քան 100 լեզուներով, սակայն հիմնականը՝ սուաիլին է: Շատերն անգամ միմյանց հետ հաղորդակցվում են անգլերենով, քրիստոնյաներն ու մուսուլմանները գոյատևում են միանգամայն խաղաղ պայմաններում, իսկ ընդհանուր քաղաքական իրավիճակն աֆրիկյան երկրի համար օրինակելի և կայուն է: Գյուղացիական տնտեսությունների չափերը տատանվում են 0,3-3,0 հեկտարի սահմաններում: Տանզանիան դասվում է աշխարհի ամենաաղքատ երկրների շարքում:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Հանքային տարրերի նշանակությունը

Ազոտ - մտնում է բոլոր սպիտակուցների բաղադրության մեջ, նյութերի, որոնք հանդիսանում են կյանքի հիմքը: Մտնում է նաև քլորոֆիլի, ռիբոնուկլեինաթթուների (ՌՆԹ) և դեզօքսիռիբոնուկլեինաթթուների (ԴՆԹ), ֆերմենտների, վիտամինների և այլ կարևոր միացությունների բաղադրության մեջ: Հետևապես՝ խիստ անհրաժեշտ է բույսերի նորմալ աճի, զարգացման և նյութափոխանակության համար:

Բույսերի համար ազոտի աղբյուր են ծառայում ազոտային թթվի աղերը՝ նիտրատներն ու նիտրիտները, ամոնիակային աղերը, ազոտի որոշ օրգանական միացությունները՝ միզանյութը և ամինաթթուները:

Ֆոսֆոր - բույսերի, ինչպես նաև մարդկանց և կենդանիների յուրաքանչյուր բջջում պարունակվում է ֆոսֆոր: Այն մտնում է բջջակորիզի, ֆերմենտների, վիտամինների, որոշ բարդ ճարպերի, ՌՆԹ-ի, ԴՆԹ-ի և այլ միացությունների բաղադրության մեջ: Ակտիվորեն մասնակցում է բջիջների էներգետիկ փոխանակությանը:



Պարարտանյութեր կարգադրելու համար

Կալիում - Պարունակվում է բույսերի բոլոր օրգաններում՝ բացառությամբ բջջակորիզի: Հատկապես՝ շատ առկա է բույսերի երիտասարդ աճող մասերում: Ակտիվորեն մասնակցում է բույսերի ածխաջրատային և ազոտային նյութափոխանակությանը: Նպաստում է երկաթի յուրացմանը, հզորացնում է սննդարար անոթները, ամրություն է հաղորդում ցողուններին, բարձրացնում ցրտադիմացկունությունը, բարելավում բերքի որակը, երկարեցնում պտուղների պահպանման ժամկետը:

Մագնեզիում - մտնում է քլորոֆիլի բաղադրության մեջ, հետևապես՝ մասնակցում է ֆոտոսինթեզին: Հանդիսանում է ֆիտինի և պեկտինային նյութերի բաղադրամասը: Ակտիվացնում է որոշ ֆերմենտների /ֆոսֆատազա և այլն/ գործունեությունը: Բոլորից շատ պարունակվում է սերմերում և բույսերի երիտասարդ աճող մասերում, հացահատիկի ծիլերում: Մագնեզիումի անբավարարություն ունեն թեթև ավազային հողերը, ուր այդ տարրի օգտագործումը նկատելիորեն բարձրացնում է բերքատվությունը:

Կալցիում - բույսերին անհրաժեշտ է միջավայրի թթվայնության չեզոքացման, բջջահեղուկի ֆիզիոլոգիական հավասարակշռության, ֆերմենտների նորմալ գործունեության, վիտամինների /C վիտամին, կարոտին/ սինթեզի և արմատների աճի համար:

Երկաթ - անբավարարության դեպքում բույսերի տերևները դեղնում են, որը մատնանշում է քլորոֆիլի առաջացման խոչնդոտման և ֆոտոսինթեզի ակտիվության անկման մասին /քլորոզի/: Բնական է, որ այս դեպքում ընկնում է բույսերի ֆունկցիոնալ արդյունավետ

Գյուղատնտեսական մշակաբույսերի բնական աճի և բերքատվության համար հողը պետք է ապահովված լինի մակրո (ազոտ, ֆոսֆոր, կալիում, մագնեզիում, կալցիում) և միկրոտարրերով (երկաթ, ցինկ, պղինձ, բոր, մանգան, կոբալտ և այլն): Նշված տարրերից որևէ մեկի անբավարարությունը կարող է էական ազդել մշակաբույսերի ֆունկցիոնալ գործունեության վրա:

տույությունը: Երկաթի անբավարարության հանդեպ հատկապես զգայուն են խնձորենին, տանձենին, սալորենին, լոլիկը, կարտոֆիլը, կաղամբը, եգիպտացորենը, աշորան և այլ մշակաբույսեր: Երկաթի անբավարարությունը, շատ հաճախ, արտահայտվում է կարբոնատային հողերում:

Օծումբ - մտնում է սպիտակուցների, որոշ բուսական յուղերի, վիտամինների /թիամին, բիոտին/ և որոշ հակաբիոտիկների բաղադրության մեջ: Բացի օրգանական միացություններից, ծծումբը բույսերում պարունակվում է նաև հանքային տեսքով՝ կալցիումի, մագնեզիումի և այլ տարրերի սուլֆատների ձևով: Հենց սուլֆատների աղերի ձևով էլ մուտք է գործում բույսերի մեջ, ուր վերափոխվում է վերականգնված ձևի:

Բույսերի համար ծծմբի հիմնական աղբյուր է գիպսը:

Բացի վերոհիշյալ տարրերից, բույսերին նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ են նաև մի շարք միկրոտարրեր՝ բոր, մանգան, մոլիբդեն, ցինկ, պղինձ, կոբալտ և այլն: Չնայած դրանք բույսերին անհրաժեշտ են փոքր քանակությամբ, այնուհանդերձ, ունեն մեծ նշանակություն բույսերի նորմալ աճի, զարգացման և բերքատվության համար: Յուրաքանչյուր վեգետացիայի ընթացքում մշակաբույսերը՝ իրենց աճի, զարգացման և բերքի ձևավորման ամբողջական փուլում, հողից վերցնում են մեծ քանակությամբ հանքային տարրեր: Այսպես, օրինակ, աշնանացան ցորենը հողից հեռացնում է միջին հաշվով՝ ազոտ՝ 94, ֆոսֆոր (P₂O₅)՝ 40, կալիում (K₂O)՝ 76, եգիպտացորենը՝ համապատասխանաբար՝ 143, 59, 221, շաքարի



Ամոնիակային սելիտրա

ճակնդեղը՝ 313, 72, 315, խաղողը՝ 60, 50, 100 կգ/հա: 100 ցետներ բերքի ձևավորման վրա լոլիկը պահանջում է ազոտ՝ 33, ֆոսֆոր՝ 11,4, կալիում՝ 45,3, վարունգը՝ համապատասխանաբար՝ 27,5, 14,6, 44,2, կաղամբը՝ 41, 14, 49, սոխը՝ 44,2, 11,6, 21,0, գազարը՝ 23,3, 10,2, 38,0 կգ:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ թեև հող չվերադարձվեն օգտագործված հանքային տարրերը, ապա այն աստիճանաբար աղքատանում է և ի վիճակի չէ այլևս ապահովել մշակաբույսերի նորմալ աճը, զարգացումն ու բերքատվությունը:

Իհարկե, բերված թվերը հարաբերական են. մշակաբույսերի կողմից հանքային տարրերի օգտագործման չափը կախված է մի շարք գործոններից՝ հողի և մշակաբույսերի տեսակից, բնակլիմայական պայմաններից, հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառման առանձնահատկություններից, բերքի քանակից, կիրառված ազոտեմիսիկայից և մի շարք այլ գործոններից: Հանքային

տարրերով հողի հարստացումը հիմնականում իրականացվում է անօրգանական և օրգանական պարարտանյութերով:

Անօրգանական կամ հանքային պարարտանյութերի ձևերը և դրանց կիրառման ստանձնահարկությունները

Ազոտական պարարտանյութերը լինում են առանձին և կոմպլեքս ձևով: Չուտ ազոտական պարարտանյութեր են՝ սելիտրան (նատրիումական և ամոնիակային), միզանյութը կամ կարբամիդը, միզանյութա-ֆորմալդեհիդը և հեղուկ ազոտային պարարտանյութերը: Կոմպլեքս ազոտական պարարտանյութերը բացի ազոտից, կարող են պարունակել նաև՝ ֆոսֆոր, կալիում, կալցիում, ծծումբ, քլոր, երկաթ, մագնեզիում, մանգան, բոր, ցինկ, պղինձ, մոլիբդեն և այլ տարրեր:

Ֆոսֆորի նկատմամբ բույսերի պահանջը բավարարվում է՝ ինչպես հողում առկա պաշարներից, այնպես էլ՝ հանքային և օրգանական պարարտանյութերի հաշվին: Հարկ է նշել, որ հողում առկա ֆոսֆորի պաշարներից միայն ոչ մեծ մասն է մատչելի բույսերին, իսկ օրգանական միացություններում պարունակվող ֆոսֆորը գործնականում չի յուրացվում բույսերի կողմից:

Ֆոսֆորական պարարտանյութերից ամենատարածվածը՝ սուպերֆոսֆատն է (Ca(H₂PO₄)₂·H₂O): Սովորաբար, սուպերֆոսֆատը միայն կալցիումի մոնոֆոսֆատ չի պարունակում, այն տարբեր նյութերի խառնուրդ է, ուր գիպսի քանակությունը կարող է հասնել մինչև 40%-ի: Սուպերֆոսֆատը համակողմանի պարարտանյութ է և կարելի է կիրառել բոլոր տեսակի հողերում:

Բույսերի համար՝ որպես կալիումի աղբյուր են ծառայում հողում, գոմադրում և այլ թափոններում առկա նրա միացությունները. ինչպես նաև հանքային պարարտանյութերը, որոնցից ամենատարածվածն է՝ քլորական կալիումը (KCl), ուր կալիումի (K₂O) պարունակությունը տատանվում է 50-60%-ի սահմաններում: Կարող են լինել նաև քլորական կալիումի 30-40%-ոց աղեր: Շատ տարածված է նաև կալիումի սուլֆատը (K₂SO₄), ուր K₂O-ի պարունակությունը տատանվում է 45-52%-ի սահմաններում:

Բույսերի համար շատ կարևոր տարր է նաև մագնեզիումը, քանի որ այն մտնում է քլորոֆիլի բաղադրության մեջ: Իրենց կենսագործունեության ընթացքում բույսերն օգտագործում են մեծ քանակությամբ մագնեզիում: Օրինակ, կարտոֆիլի 200 գ/հա բերքի դեպքում՝ հողից դուրս է գալիս 40 կգ մագնեզիում, աշորայի 18 գ/հա բերքի դեպքում՝ 10 կգ, գարու 30 գ/հա բերքի դեպքում՝ 14 կգ, շաքարի ճակնդեղի 400 գ/հա բերքի դեպքում՝ 70 կգ, առվույտի 80 գ/հա բերքի դեպքում՝ 50 կգ և այլն:

Ներկայումս, շատ հաճախ, մագնեզիումի աղբյուր են ծառայում ոչ թե զուտ մագնեզիումական պարարտանյութերը (դոլոմիտ, մագնեզիտ, կիզերիտ, դունիտ և այլն), այլ նաև ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող կոմպլեքս հանքային պարարտանյութերը:

Կոմպլեքս պարարտանյութերը, սովորաբար, պարունակում են երկու և ավելի սննդային տարրեր: Սրանց առավելությունը կայանում է նրանում, որ բալաստ չեն պարունակում:

Ամենատարածվածը՝ ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող կոմպլեքս պարարտանյութերն են՝ ամոնիում, կալիումական սելիտրան, նիտրոֆոսը, նիտրոամոնիոսը, նիտրոֆոսկան, նիտ-

րոամոնիոսկան և այլն: Ամոնիումի մեջ ազոտի պարունակությունը 9-12%-է, իսկ ֆոսֆորինը (P₂O₅)՝ 42-52%:

Կալիումական սելիտրայի մեջ ազոտի հաշվեկշիռը կազմում է 13-13,5%, կալիումինը (K₂O)՝ 36-38,2%, ֆոսֆորինը՝ 0,9-1,3%:

Նիտրոֆոսկան դասական կոմպլեքս պարարտանյութ է, ուր ազոտը, ֆոսֆորը և կալիումը հանդես են գալիս հավասար հարաբերակցությամբ (11:11:11): Սակայն, ներկայումս թողարկվում են նաև նշված տարրերի տարբեր հարաբերակցություն ունեցող պարարտանյութեր: Պտղատու և տնամերձ այգիների համար խորհուրդ է տրվում կիրառել նիտրոֆոսկա՝ 16:16:16 հարա-



Կոմպլեքս պարարտանյութեր

բերակցությամբ, իսկ կանոնավորված ջրային ռեժիմ ունեցող մշակաբույսերի համար ավելացվում է նաև մագնեզիում (15:10:12:2):

Նիտրոամոնիոսկան (NH₄H₂PO₄+NH₄NO₃+KCl) և շատ տարածված պարարտանյութերից է: Սովորաբար՝ ազոտի, ֆոսֆորի և կալիումի հարաբերակցությունը դրանում 17:17:17 է: Սակայն, հաշվի առնելով մշակաբույսերի զարգացման փուլային առանձնահատկությունները, արտադրվում է նաև նիտրոամոնիոս 15:20, 13:13:24, 8:24:24, 10:26:26, 20:10:10 և այլ հարաբերակցությամբ: Կիրառման միջին նորման մեկ հեկտարի համար կազմում է 250-300 կգ: Բանջարեղենի և կարտոֆիլի համար խորհուրդ է տրվում օգտագործել 25-30, պտղատուների համար՝ 40-50, հատապտուղների համար՝ 20-30, պաշտպանված գրունտում՝ 75-90 գ/մ² նորմայով:

Բազմամյա պտղատուների տնկման ժամանակ փոսֆ մեջ կարելի է լցնել 350-400 գ նիտրոամոնիոսկա:

Մնուցման համար պտղատու խնձորենու մեկ ծառին խորհուրդ է տրվում տալ 300-400գ, բալենուն՝ 120-150գ պարարտանյութ: Որպես հիմնական պարարտանյութ աշնանը կարելի է կիրառել միայն ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը և գոմադրը: Ազոտական պարարտանյութերը խորհուրդ չի տրվում կիրառել աշնանը՝ կորուստներից խուսափելու համար: Դրանք պետք է կիրառել գարնանը և վեգետացիայի ընթացքում:

Սովորաբար, հանքային պարարտանյութեր կիրառելիս, անհրաժեշտ է նախ հետազոտել հողը, պարզել հանքային տարրերով ապահովվածության աստիճանը, ծանոթանալ տվյալ մշակաբույսին անհրաժեշտ սնուցավարքին և կատարել առաջարկվող միջոցառումները:

Լևոն Աճեմյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու, Սպառողների ազգային ակադեմիայի գյուղատնտեսական դեկան

ՀԵՏԱԲՈՒՄ Է...

Ֆիկուս

Ֆիկուսը պարկանում է թթազգիների ընտանիքին, հաշվվում է ֆիկուսի մոտ 1500 տեսակ: Տարբեր տեսակների հայրենիքը տարբեր վայրեր են: Հիմնականում տարածված է Աֆրիկայում, Ասիայում և Արևելյան Հնդկաստանում: Ֆիկուսները լինում են ծառերի և թփերի տեսքով: Ֆիկուսը մշտադալար բույս է: Ֆիկուսի ծառային տեսակն իր հայրենիքում հասնում է մինչև 30 մետրի, իսկ փայլուն, կաշենման տերևները հաճախ մեկ մետրից ավելի երկարություն ունեն: Ֆիկուսը սենյակային դեկորատիվ բույսերի շրջանում շատ տարածված է, հասնում է մինչև 2 մետրի, բունը բավականին հասար է և պարզ կեղևով: Բույսը պայմանների նկատմամբ քմահաճ չէ: Աճի շրջանում պահանջում է մեծ քանակությամբ ջուր. հողի մակերեսը պետք է միշտ խոնավ լինի:



ԴԱՂՁ, ԱՆԱՆՈՒՄ...

Տարբեր անվանումներով հայտնի այս բույսի վերագտնյա մասը եթերայուղ է պարունակում. ամենաշատը՝ ծաղիկների մեջ՝ 4-6 %: Դեռևս միջնադարում կարծիք կար, որ անանուխի հոտն ակտիվացնում է ուղեղի աշխատանքը: Դաղձի եթերայուղը ստացվում է ջրային գոլորշիների միջոցով թրմելու եղանակով: Մեծ Բրիտանիայում կատարված հետազոտությունների արդյունքում հաստատվել է, որ բրազիլական դաղձն, օրինակ, համարժեք է առաջատար դեղագործական ցավազրկողների ազդեցությանը:



Բուժման նպատակով օգտագործում են դաղձի տերևները՝ ոչ միայն բուսահումքի, այլև նրանից ստացվող եթերայուղի ձևով: Դաղձն ունի հանգստացնող, ցավազրկող, անոթալայնիչ, հակաբորբոքային հատկություններ: Այն օգտակար է մարսողական համակարգի խանգարումների ժամանակ: Դաղձը նվազեցնում է ստամոքսում գազերի առաջացումը, օգնում է լուծի դեպքում, օրգանիզմից հեռացնում է լեղին: Այդ իսկ պատճառով, դաղձը կիրառվում է լյարդի մաքրման և լեղապարկից քարերի դուրսբերման նպատակով: Դաղձը օգտագործվում է նաև բարձր ջերմության, տենդի և մրսածության հետևանքով առաջացած հիվանդությունների՝ անգինայի, ֆարինգիտի ժամանակ՝ որպես քրտնաբեր միջոց:

Ջրացրած դաղձը կամ 3 ճաշի գդալ թարմ դաղձը թրմեք 250 մլ եռացրած ջրով առնվազն 30 րոպե: Թուրմից սառցե խորանարդիկներ պատրաստեք և օգտագործեք դեմքը մաքրելու համար: Այն օգնում է մաշկի գրգռվածության և ջրի դեպքում, թարմացնում է մաշկը:

Նյարդային գերլարվածության դեպքում 2-3 թեյի գդալ դաղձի վրա լցրեք 1/2 լիտր ջուր և եռացրեք, խմեք՝ որպես թեյ: Հակատոքսիկ հատկության շնորհիվ, դաղձը լայնորեն կիրառվում է նաև տարբեր տեսակի թուսավորումների դեպքում: Անանուխի թեյը շատ օգտակար է ստամոքսային խանգարումների համար, հեշտացնում է մարսողությունը: Այն օժտված է հակասպազմոլիտիկ հատկությամբ, հետևաբար՝ նրա օգնությամբ կարող եք ազատվել մկանային լարվածությունից: Կալորիականությունը՝ 0 է:

Օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու, ենթաստամոքսային գեղձի ու լեղապարկի խնդիրներից ազատվելու համար ամեն օր առավոտյան խմեք դաղձի թուրմի, կիտրոնի հյութի և 1 թեյի գդալ մեղրի խառնուրդից պատրաստված ըմպելիք:

Գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, որ 1 բաժակ դաղձի թուրմը ոչնչով չի զիջում սիմբիոտիկ ասպիրինին: Նրանք գտնում են, որ այս թեյի հիմնական բուժիչ բաղադրիչը մենթոլն է, որն առկա է այս բույսի յուղի մեջ: Ըստ չինացի գիտնականների՝ կանանց, ովքեր մարմնի և դեմքի չափից շատ մազակալման խնդիր ունեն, խորհուրդ է տրվում ավելի շատ խմել դաղձի թեյ: Նրանք պնդում են, որ դաղձը կանանց օրգանիզմում պարունակվող անդրոգենների նվազեցման հատկություն ունի, ինչի շնորհիվ կասեցնում է մաշկի վրայի մազերի գերաճը: Դաղձով թեյը կարելի է օգտագործել օրվա ցանկացած ժամի:

Ֆիկուսը ջերմասեր բույս է, բայց նախընտրելի է այն դեմքերում, որտեղ տակարարի ուղիղ ճառագայթներից հեռու: Երիտասարդ բույսերը պետք է դնել արևմտյան և հարավ-արևմտյան լուսամուտների մոտ՝ լուսավոր տեղերում: Լույսի պակասությունից տերևները կընկնեն, որի պատճառով էլ նա կկորցնի իր դեկորատիվ շքեղ տեսքը: Ամռանը լավ կլինի բույսը դնել դրսում՝ ստվերոտ տեղերում: Տերևները պետք է սրբել խոնավ շորով:

Ֆիկուսը ջերմասեր բույս է, բայց նախընտրելի է այն դեմքերում, որտեղ տակարարի ուղիղ ճառագայթներից հեռու: Երիտասարդ բույսերը պետք է դնել արևմտյան և հարավ-արևմտյան լուսամուտների մոտ՝ լուսավոր տեղերում: Լույսի պակասությունից տերևները կընկնեն, որի պատճառով էլ նա կկորցնի իր դեկորատիվ շքեղ տեսքը: Ամռանը լավ կլինի բույսը դնել դրսում՝ ստվերոտ տեղերում: Տերևները պետք է սրբել խոնավ շորով:

Եթե ձմռանը ֆիկուսը դրված լինի տաք վայրում, այն կակտիվացնի նրա աճը՝ հունվար-փետրվարին, որը կթուլանա բույսը և թույլ չի տա, որ նա գարնանը լավ զարգանա: Բազմացվում է կտրոններով, որի համար գլխավորապես օգտագործվում են ճյուղերի ծայրամասերը: Կտրոն պատրաստելու համար որոշ ժամանակ պետք է պահել գոլ ջրի մեջ, մինչև կաթնախեղուկն ամբողջությամբ թափվի, հակառակ դեպքում՝ դուրս հոսող հեղուկի մաճուցիկության պատճառով, մազանոթները կփակվեն, իսկ կտրոնը կչորանա:

Կան նաև ֆիկուսի թափվող տեսակներ, որոնց տերևները մանր են ու բարակ, իսկ ճյուղերը կախվում են: Հնուց հայտնի է նաև սողացող ֆիկուսը, ժամանակակից տեսակներից է գաճաճ ֆիկուսը՝ (Pumila, Sunny):

Ֆիկուսը ստեղծում է ընտանեկան մթնոլորտ: Այն մարդկանց մոտ առաջացնում է նույնիսկ բարեգործություն անելու զգացում և օգնում է մարդկանց դառնալ ավելի համբերատար և ուշադիր միմյանց նկատմամբ: Ֆիկուսը հատկապես օգտակար է տներում ներքին ազդեցության հանելու համար: Մարդիկ, որոնց շուրջը ֆիկուս է աճեցված, դառնում են ավելի ներդաշնան, հանդուրժող միմյանց նկատմամբ: Նույնիսկ հոռետեսին դարձնում է ավելի լավատես: Ֆիկուսը տրամադրում է մարդուն, որ կարողանա կիսել իր խնդիրները մյուսների հետ, իրեն ավելի հարմարավետ զգա մարդկանց ներկայությամբ և զգա դիմացինի հոգատարության ու սիրո կարիքը:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ՖԻԿՈՒՍՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ամենահայտնին տնային ֆիկուսների մեջ կաուլոկայինն է, որն ունի ուղիղ բուն: Այն առաջին տարիներին հակված չէ ճյուղավորվելու: Այս տեսակի ֆիկու-

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարանն ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկի-նիսար» գրատներում:



Advertisement for 'Agronews' magazine. It includes the magazine title 'ԱԳՐԱԼՐԱՏՈՒԼ' and 'ԵՐԱՏՈՒԼ' in Armenian, the year '2015 թ.', and a table of subscription rates for different periods. Below the table, it lists the magazine's focus on agricultural news and provides contact information for subscriptions.

Logo for 'Agronews' (ԱԳՐԱԼՐԱՏՈՒԼ) and 'AGRONEWS'. It includes contact information: 'Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80' and 'E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am'.

Textual information for 'Agronews' including the address 'Տպաքանակ՝ 1100', '2 տպագրական մասնով գրանցման թիվ՝ 01 Մ՝000226', 'դասիչ՝ 69105', 'պատվեր թիվ՝ 135', 'ստորագրված է տպագրության 04.12.2015 թ.', 'տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա'.